

ՄԵՏԱՄՈՂԵՈՆԻ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆԸ.
ՏԱՏԱՆՈՒՄՆԵՐԸ ՄՈՂԵՈՆԻ ԵՎ ՀԵՏՄՈՂԵՈՆԻ
ԳԵՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԻՋԵՎ

ՂԱՄՔԱՐՅԱՆ ԱՐԹՈՒՐ

Ի.գ.դ., պրոֆեսոր, Հայ-ռուսական (Սլավոնական) համալսարանի իրավունքի տեսության
և սահմանադրական իրավունքի ամբիոնի վարիչ, ՀՀ պետական կառավարման
ակադեմիայի պրոֆեսոր, իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր,
ՀՀ վաստակավոր իրավաբան
DOI:10.63925/18294847-2025.19op-17

Քանալի բառեր: Մոդեռն, հետմոդեռն, մեթամոդեռն, *contra legem*, թվային հասարակություն, ճշմարտություն, տարանջատ իրավաբան:

Ամփոփագիր: Հոդվածում հեղինակը նպատակադրվում է ներկայացնել մոդեռնի և հետմոդեռնի միջև արդարադատության գերակայությունների տարանջատները, ինչի նպատակով ի դերն է հանում մոդեռնի, հետմոդեռնի և մեթամոդեռնի ընդհանուր բնութագրերը, ապա հիմնվելով ներքոնշյալ երեք հիմնահարցերի վրա վերլուծում է մեթամոդեռնի բնորոշ ճոճանակային տարանջատները:

Հեղինակը նշում է, որ մեթամոդեռնի իրավաբանը որոշումներ կայացնելիս մեկ ճոճվում է դեպի մոդեռն և փորձում է լինել անկեղծ, ապա վերադառնալով հետմոդեռն կրկին ընտրում է հեգնանքն ու ցինիզմը(1), մեկ ճոճվում է դեպի մոդեռն և ընտրում օբյեկտիվ ճշմարտությունը, ապա վերադառնում է հետմոդեռն և խոսում է ձևական ճշմարտության մասին(2), կամ ճոճվում է դեպի ապացույցների թույլատրելիության մոդեռնիստական ընկալումը, ապա վերադառնում է հետմոդեռն և խոսում մարդու իրավունքների խախտմամբ ձեռք բերված ապացույցների անթույլատրելիության մասին(3):

Հեղինակը կարծում է, որ ժամանակակից հասարակության թվայնացման պայմաններում, երբ հասարակությունը թվային տեխնոլոգիաների միջոցով ակամա ականադրես է դառնում հանցագործության իրականացման փաստին, տրանսֆորմացվում է նաև ապացույցների թույլատրելիության սկզբունքի ընկալումը դատարանի կողմից, թույլ տալով շեղումներ և բացառություններ:

Հեղինակի կողմից օգտագործվել են գիտահետազոտական բազմաթիվ մեթոդներ, և, մասնավորապես, սոցիոլոգիական մեթոդը հանձինս հոդվածում ներկայացված հարցման:

1. Ընդհանուր դրույթներ

Մոդեռնի ժամանակաշրջանը (XIX-րդ դարի վերջ - XX-րդ դարի կեսեր) բնութագրվում է ունիվերսալիզմով, ռացիոնալիզմով, պրոգրեսով, ինչպես նաև՝ գաղափարական միամտությամբ, երբ մարդն հավատում էր օբյեկտիվ իրականությունը բանականությամբ բացահայտելու հնարավորությանը կամ մեծ

պատմվածքներին (նարատիվներին), օրինակ՝ ֆաշիզմին: Մոդեռնի բարոյականությունը և իրավունքը բացարձակ էին, այսինքն՝ առկա էին ընդհանուր (ունիվերսալ) կանոններ և մաքսիմաներ, օրինակ՝ միակ իրավունքը դա պոզիտիվ իրավունքն էր, որն անսխալական և անհակասական կանոնների համակցություն է կամ օրինակ՝ Կանտի կատեգորիկ իմպերատիվը:

Հետմոդեռնի ժամանակաշրջանը (XX-րդ դարի կեսեր - XXI-րդ դարի սկիզբ) բնութագրվում է ռեյատիվիզմով (հարաբերականությամբ) և բազմակարծությամբ, հեգնանքով, նիհիլիզմով, մեծ պատմվածքների (կոմունիզմ, ֆաշիզմ և այլ պատմվածքների) մերժմամբ: Հետմոդեռնը մերժում է մեկ միասնական օբյեկտիվ ճշմարտությունն ու կարծում է, որ ճշմարտությունը միշտ հարաբերական է և կախված է պատմական և սոցիալական համատեքստից: Հնարավոր չէ աշխարհը բացատրել մեկ միասնական տեսությամբ կամ գաղափարախոսությամբ: Հետմոդեռնը նաև բնական իրավունքի վերածննդի ժամանակաշրջանն է, իսկ հետմոդեռնի իրավաընկալումը՝ ինտեգրատիվ իրավահասկացողությունն է:

Եվրոպայում «հետմոդեռնի արմատները պետք է փնտրել Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո լայն տարածում գտած անորոշության, թերահավատության և բազմակարծության մթնոլորտում»¹, իսկ հետխորհրդային պետություններում հետմոդեռնիստական հայեցակարգը հստակ և վառ արտահայտվեց միայն ԽՍՀՄ փլուզումից հետո:

Մարդն ընտրում է և անընդհատ չի բավարարվում իր ընտրությամբ: Այսօր մարդկությանը չեն բավարարում ո՛չ մոդեռնը, ո՛չ հետմոդեռնը. ո՛չ մոդեռնի պարզ միամտությունը, ոչ հետմոդեռնի ցինիզմը և հեգնանքը, ոչ մոդեռնի ռացիոնալիզմը, ոչ էլ հետմոդեռնի իռացիոնալիզմը: Սա է զարգացման ներկա փուլի՝ մետամոդեռնի էությունը²:

Մետամոդեռնի ժամանակաշրջանը (XXI-րդ դարի սկզբից մինչև մեր օրերը) հետմոդեռնի վերաիմաստավորման և մոդեռնին բնորոշ արժեքների վերածնման ժամանակահատվածն է: Մետամոդեռնը «փորձում է վեր բարձրանալ մոդեռնի և հետմոդեռնի ծայրահեղություններից»³:

«Մետամոդեռն» բառի մեջ «մետա-» նախածանցը բացատրվում է «մետաքսիս» (μεταξύ) բառի միջոցով, որը նշանակում է «միջև»⁴: Մետամոդեռնի համատեքստում խոսել մետաքսիսի մասին նշանակում է խոսել մոդեռնի և հետմոդեռնի հակադիր բևեռների (ծայրահեղությունների, գերակայությունների) միջև շարժման մասին, որտեղ մոդեռնի և հետմոդեռնի արժեքների միջև տեղի է ունենում ոչ թե հավասարակշռություն, այլ ճոճանակաձև տատանում (օսցիլյացիա, լատիներեն՝ *oscillo*

¹ **Летов О.В.** От постпозитивизма к постмодернизму // Вестник культурологии. 2010. №3.

URL: <https://cyberleninka.ru/article/n/ot-postpozitivizma-k-postmodernizmu> (дата обращения: 13.04.2024).

² Տե՛ս **Бавсун М. В., Попов Д. В.** «Метамодерн в праве: осцилляция в точке Канетти. Статья I. пролиферация норм и разум» // Научный вестник Омской академии МВД России. 2018. № 4 (71), էջ 64:

³ Տե՛ս **Ершов В.В.** «Право в контексте парадигмы метамодерна» // Правосудие. 2019. №2, էջ 15–33:

⁴ 1989 թվականին Ֆոգելենը փաստաթղթերի հիման վրա հաստատեց, որ Պլատոնն իր «Միմպոզիումում» մետաքսիս բառն օգտագործել է, որպեսզի նկարագրի երկու ծայրահեղությունների միջև մնալու զգացողությունը. խոսել մետաքսիսի մասին նշանակում է խոսել (հակառակ) բևեռների միջև շարժման մասին: Ընդ որում խոսքը ոչ թե այդ բևեռների բինարության կամ հավասարակշռության մասին է, այլ ճոճանակի, որը ձոճվում է տարբեր ծայրահեղությունների միջև: Տե՛ս **Аккер Р. ван ден, Вермюлен Т.** «Периодизируя 2000-е, или Появление метамодернизма // Метамодернизм. Историчность, аффект и глубина после постмодернизма». / Перевод с англ. В. М. Липки. М.: РИПОЛ классик, 2019. <https://metamodernizm.ru/emergence-of-metamodernism/>

– տատանվել⁵):

Մետամոդեռնի իրավաբանը ճոճվող, տատանվող իրավաբան է. նա որոշումներ կայացնելիս մեկ ճոճվում է դեպի մոդեռն և փորձում է լինել անկեղծ (բայց ոչ միամիտ), այնուհետև վերադառնում է հետմոդեռն և կրկին ընտրում է հեգնանքը և ցինիզմը (1), կամ ճոճվում է դեպի մոդեռն և ընտրում օբյեկտիվ ճշմարտությունը, այնուհետև վերադառնում է հետմոդեռն և խոսում է ձևական (դատարանում ապացուցված) ճշմարտության մասին (2), կամ ճոճվում է դեպի ապացույցների թույլատրելիության մոդեռնիստական ընկալումը, ըստ որի՝ թույլատրելի է ցանկացած վերաբերելի ապացույց, այնուհետև վերադառնում է հետմոդեռն և խոսում է մարդու իրավունքների խախտմամբ ձեռք բերված ապացույցների անթույլատրելիության մասին (3):

Առանձին-առանձին քննարկենք այս ոլորտներում առկա ճաճանակաձև տատանումները:

2. Տատանումները մոդեռնի միամտության և հետմոդեռնի հեգնանքի միջև. մետամոդեռնի նոր անկեղծությունը

2.1. Մեդամոդեռնի «նոր անկեղծությունը»

Մոդեռնը բնութագրվում է գաղափարական միամտությամբ: Ին-դոկտրինացիայի⁶ միջոցով մարդիկ հավատացին մեծ պատմվածքներին, օրինակ՝ ֆաշիզմին, կոմունիզմին, իսկ իրավաբանները հավատացին, որ պետության պոզիտիվ իրավունքն անսխալական է, անհակասական է և զուրկ է բացերից:

Հետմոդեռնին բնութագրական է հեգնանքը, նմանակեղծումը (իմիտացիան), սիմուլյակրիզմը⁷, ցինիզմը, նիհիլիզմը, մասնավորապես՝ մեծ պատմվածքների մերժումը: «Դժվար է հասկանալ, թե հետմոդեռնի «անկեղծ» սուբյեկտը իրականում անկեղծ է, թե՞ նա, ինքն իրեն թաքցնելով դիսկուրսիվ դիմակի ներքո՝ պարզապես խաղում է անկեղծությամբ»⁸:

Իրավունքի տեսաբանները նշում են.

«Հետմոդեռնիստական հոետորաբանության մեջ այլևս չկա համաձայնության գաղափարը, որն ապահովում էր կամայականության դեմ առնվազն նվազագույն «շոշափելի» երաշխիքներ, իսկ «հետմոդեռնի» դատավորը, ո՛չ ապացույցները գնահատելիս, ո՛չ էլ նորմերը մեկնաբանելիս, այլևս չի կարող հույս դնել որևէ մեկի վրա : (...) Դատավորն այս դեպքում նմանվում է արիստոտելյան խոհեմ անհատի, որն արդարի և անարդարի մասին դատում է՝ չունենալով հստակ չափանիշներ»⁹:

Ի տարբերություն նախորդ ժամանակաշրջանների՝ մետամոդեռնն անկեղծության, հույսի, ռոմանտիզմի, հուզականության ու մեծ պատմվածքների և ունիվերսալ ճշմարտությունների ներուժի վերածնման ժամանակաշրջան է, որտեղ չեն անտեսվում նաև այն ամենը, ինչ սովորել ենք հետմոդեռնի ժամանակներից: «Մետամոդեռնի

⁵ Այս մասին տե՛ս **Тёрнер Люк.** «Манифест метамодернизма (Metamodernist Manifesto)» // <https://metamodernizm.ru/manifesto/>

⁶ Լատիներենից՝ *in*— «ներս» և *doctrina* — «ուսմունք, տեսություն, դոկտրինա»: Ին-դոկտրինացիան մարդկանց գիտակցության մեջ գաղափարական կարծրատիպերի, սոցիալական գաղափարների, կրոնական հայացքների ներդրումն է, որոնք համոզում են ինչ-որ մեկի կամ ինչ-որ քաղաքականության իրավացիության, արդարացիության մեջ:

⁷ Լատիներեն *simulo*— կեղծել, *simulacrum* — նմանություն, պատճեն:

⁸ Տե՛ս **Эшельман Рауль.** «Перформатизм как преодоление постмодерна» // Философско-литературный журнал «Логос». 2021. №6 (145), էջ 10:

⁹ Տե՛ս **Самохина Е. Г.** «Постмодернистская теория права» // В поисках теории права: коллективная монография / под ред. Е. Г. Самохиной, Е. Н. Тонкова. - СПб.: Алетея, 2021, էջ 75:

մանիֆեստի» հեղինակ Լ. Թերները նշում է.

«Մենք մետամոդեռնի մանիֆեստը դիտարկում ենք որպես (. . .) հեգնանքի և անկեղծության միջև տատանում: (...) Մետամոդեռնի սերունդը գիտակցում է, որ մենք կարող ենք միաժամանակ լինել հեգնական և անկեղծ. պարտադիր չէ, որ մեկը ճնշի մյուսին»¹⁰:

Ասվածը չի նշանակում, որ անհրաժեշտ է վերադառնալ մոդեռնի միամտությանը, երբ ամեն բան ընկալվում է որպես բնական և ճշմարիտ: «Հետմոդեռնի հեգնանքը չի կորցրել իր նշանակությունը»¹¹, պարզապես՝ նոր անկեղծությունը դառնում է մետամոդեռնի գլխավոր թեմաներից մեկը: Մետամոդեռնը, հաղթահարելով մոդեռնի գաղափարական միամտությունը և հետմոդեռնի հեգնանքն ու ցինիզմը, անկեղծությունը և ազնվությունը դիտարկում է որպես մարդու վարքագծի հիմնական շարժառիթ:

Մետամոդեռնի հանրային-քաղաքական կյանքում հաջողության են հասնում այն տեքստերը, այդ թվում՝ դատական տեքստերը, որտեղ հեղինակը ոչ թե կեղծում կամ թաքցնում է իրականությունը կամ ձևացնում (նմանակում) է իրականություն, այլ հնարավորինս անկեղծ նկարագրում իր գործողությունները և որոշումները:

4.2. Մեթամոդեռնի դատական անկեղծությունը

Հետմոդեռնի արդարադատությունը, արտացոլելով ժամանակի աշխարհընկալումը, մի շարք հարցերում աչքի է ընկնում անկեղծության և ազնվության պակասությամբ: Հետմոդեռնի դատավորը երբեմն դատական ակտերում օգտագործում է այնպիսի ձևակերպումներ, որոնք ոչ թե արտացոլում են իրականությունը, այլ կեղծում կամ թաքցնում են այն: Օրինակ՝ հետմոդեռնի դատավորը քաջ գիտակցում է, որ օրենքներում հնարավոր են անտրամաբանություններ, թերություններ ու սխալներ, իսկ նման թերություններ ունեցող օրենսդրական դրույթներին ենթարկվելը (կիրառելը) երբեմն պարզապես անհնարին է (առկա է ֆիզիկական անհնարինություն), կամ էլ դրանք կիրառելը կառաջացնի աղաղակող աստիճանի հիպեր-անտրամաբանական կամ հիպեր-անարդար հետևանքներ¹²: Պոզիտիվիստ դատավորը, ամենայն հավանականությամբ, գիտակցում է, որ նման իրավիճակներում պետք է շարժվի ոչ թե օրենքում նշված ուղիով, այլ պետք է ընտրի մեկ այլ ճանապարհ, որի դեպքում նա կշեղվի օրենքի տեքստից (իսկ եթե միտքը ձևակերպենք առավել անկեղծ, ապա՝ կհակադրվի օրենքի տեքստին) :

Այս իրավիճակում դատավորը տատանվում է, թե լեզվական ինչ արտահայտություններով պետք է նկարագրի այդ «մեկ այլ ճանապարհը». դատական ակտը շարադրելիս նա ազնվորեն և անկեղծորեն իր վարքագիծը պետք է նկարագրի *contra legem* իրավունքի զարգացման դոկտրինի տերմինաբանությամբ և օգտագործի

¹⁰ **Luke Turner** «Metamodernism: A Brief Introduction» // In the press, Theory, January 12, 2015.
<https://www.metamodernism.com/2015/01/12/metamodernism-a-brief-introduction/>

¹¹ **Гусельцева М.С.** «Метамоде́рнизм в психологии: новые методологические стратегии и изменения субъективности» // Вестник Санкт-Петербургского университета. Психология. 2018. Т. 8. Вып. 4. С. 335, **Гребенюк А. А.** «Культурно-исторический анализ переживаний человека эпохи метамодернизма» // Азимут научных исследований: педагогика и психология. 2019. Т. 8. № 1(26). С. 327.

¹² Օրենսդրական կարգավորման այն աղաղակող անտրամաբանությունը կամ անարդարությունը, որը հնարավոր է որոշել «տասնչորս տարեկան երեխայի» բանաձևով, կանվանենք հիպեր-անտրամաբանություն կամ հիպեր-անարդարություն: «Տասնչորս տարեկան երեխայի» բանաձի մասին տես **Гамбарян А.С.** «Принцип законности и положение «судья подчиняется закону» в контексте доктрины развития права *contra legem*» // Правоприменение. 2023. Т. 7, № 4. С. 15–24. DOI: 10.52468/2542-1514.2023.7(4).15-24.

«օրենքին հակառակ իրավակիրառում» ձևակերպումը, թե՛ իրականությունը կեղծելով և «օրենսդրի իրական կամքը բացահայտել» ձևակերպումը որպես վահան օգտագործելով՝ պետք է խոսի «օրենքը շտկող մեկնաբանման (interpretation corrective, abrogans)» կամ օրենքում չնախատեսված «ողջամտի բացառության» մասին:

Հետմոդեռնի արդարադատությունը, հեզնելով իրականությունը, կօգտագործի «օրենքը շտկող մեկնաբանություն» կամ «ողջամտի բացառություն» ձևակերպումները, այլ կերպ ասած՝ կձևացնի անկեղծություն: Մինչդեռ, մետամոդեռնի արդարադատությունը կընտրի անկեղծության ճանապարհը և կնշի, որ իրավունքի (արդարության) սկզբունքների հիման վրա հակադրվում է օրենքի հիպեր-անարդար կամ հիպեր-անտրամաբանական կարգավորմանը (contra legem իրավունքի զարգացում): Այս ամենը ներկայացնենք օրինակներով:

ՀՀ քր. դատ. օր.-ի 107-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ մահվան պատճառը քրեական վարույթում կարող է հաստատվել միայն դատաբժշկական փորձագետի եզրակացությամբ: Պատկերացնենք, որ հանցագործն իր զոհին սպանել է դիակիզարանում հրկիզելու եղանակով, որի արդյունքում զոհի մարմինն ամբողջությամբ այրվել է: Նա սպանության այս ընթացքը տեսաձայնագրել է:

ՀՀ քր. դատ. օր.-ի 107-րդ հոդվածի 1-ին մասը իմպերատիվ պահանջում է մահվան պատճառը հաստատել բացառապես դատաբժշկական փորձագետի եզրակացությամբ: Այս պարագայում ինչպես կվարվեն հետմոդեռնի և մետամոդեռնի արդարադատությունները:

Հետմոդեռնի արդարադատությունը, օրենքի պահանջը կատարելու մասին կեղծ տպավորություն ստեղծելու նպատակով կնշանակի դատաբժշկական փորձաքննություն և փորձագետին կտրամադրի սպանության տեսաձայնագրությունը, իսկ փորձագետը, իր հերթին, ձևացնելով թե իբրև կատարում է փորձաքննություն՝ կուսումնասիրի տեսաձայնագրությունը և կտա մահվան հավանական պատճառի մասին եզրակացություն: Սա հետմոդեռնին բնորոշ՝ արդարադատության հեզնանքն է իրականության հանդեպ:

Նկարագրված հիպոթետիկ իրավիճակում ի սկզբանե պարզ է, որ իրականում փորձաքննություն չի կարող կատարվել, քանի որ դատաբժշկական փորձաքննության համար անհրաժեշտ է կատարել դիակի հետազոտություն, իսկ ծայրահեղ դեպքերում՝ հիվանդության պատմության վերաբերյալ բժշկական փաստաթղթերի ուսումնասիրություն: Տեսաձայնագրության հիման վրա մահվան պատճառը հաստատելու նպատակով կատարված գործողությունը ոչ թե փորձաքննություն է, այլ փորձաքննության սիմուլյակր, այսինքն՝ գոյություն չունեցող իրականության պատճեն:

Մետամոդեռնի արդարադատությունն այս իրավիճակին կմոտենա անկեղծությամբ և կփաստի, որ դիակի բացակայության կամ գոնե բժշկական փաստաթղթերի (հիվանդության պատմության) բացակայության պայմաններում առկա է ՀՀ քր. դատ. օր.-ի 107-րդ հոդվածի 1-ին մասի իմպերատիվ պահանջի կատարման ֆիզիկական անհնարինություն, այնուհետև, հիմք ընդունելով contra legem իրավունքի զարգացման դոկտրինը, կվկայակոչի «lex non cogit ad impossibilia» (օրենքը չի պահանջում անհնարինը) իրավական մաքսիմը և ՀՀ քր. դատ. օր.-ի 107-րդ հոդվածի 1-ին մասի իմպերատիվ կարգավորմանը հակառակ կսահմանի նոր կանոն՝ դիակի կամ հիվանդության պատմության բացակայության դեպքում մահվան հավանական

պատճառը կարող է հաստատվել դեպքի տեսաձայնագրմամբ¹³:

Մեկ այլ օրինակ: Հետմոդեռնի հեգնանքի օրինակ է այն գիտնականների դիրքորոշումը, ըստ որի ՌԴ-ում 24.06.2023թ. Պրիգորժինի զինված ապստամբության դեպքով հարուցված քրեական գործը կամովին հրաժարվելու հիմքով կարճելն համապատասխանում է ՌԴ քր. օր.-ի 31-րդ հոդվածում ներդրված իմաստին: Այսպես, Լ. Գոլովկոն նշում է.

«Դատելով ՌԴ Անվտանգության Դաշնային Ծառայության մամուլի հաղորդագրության ժխտ ձևակերպումներից («նրանք դադարեցրել են գործողությունները, որոնք ուղղակիորեն ուղղված են հանցագործության կատարմանը») քրեական գործը կարճվել է զինված ապստամբության հանցագործությունից կամովին հրաժարվելու պատճառով, ինչը, ՌԴ. քր. օր.-ի 31-րդ հոդվածում դրված իմաստի միանգամայն ճիշտ մեկնաբանությունն է: Ուստի Քննչական մարմինները նույնիսկ ստիպված չէին հանուն պետական նպատակահարմարության, մարդկանց կյանքի պահպանման և քաղաքացիական պատերազմի կանխարգելման գործել ոչ միայն *contra legem*, այլև *extra legem*»¹⁴:

Արդյո՞ք անկեղծ է պրոֆեսորը, երբ նշում է, որ այս դեպքով քրեական գործի կարճումը համապատասխանում է ՌԴ քր. օր.-ի՝ կամովին հրաժարվելու մասին դրույթին կամ, երբ նշում է, որ այս դեպքում առկա չէ ո՛չ *contra legem*, ո՛չ էլ *extra legem* իրավակիրառում. կարծում ենք՝ ոչ: Նման գնահատկանքը հետմոդեռնին ներհատուկ հեգնանք է իրականության հանդեպ: Թերևս քչերը կասկածի տակ կոնեն, որ Պրիգորժինի զինված ապստամբությունն ավարտված հանցագործություն է: Այս փաստը դժվար է վիճարկել, քանի որ թվային հասարակությունն առցանց կամ հետառցանց դիտել է այդ հանցագործության կատարման ընթացքը (անմիջականորեն հայտնաբերել է հանցավոր դեպքը) և բոլորի համար պարզ էր, որ նրանց հանցավոր գործողություններն ավարտվել էին մինչև ՌԴ մայրաքաղաք հասնելը: Կասկածից վեր է, որ այս պարագայում զուտ պոզիտիվ քրեական իրավունքի տեսանկյունից հանցագործությունից կամովին հրաժարվելու ինստիտուտը կիրառելի չէր:

Հստակեցնենք, որ Պրիգորժինի զինված ապստամբության գործով քրեական հետապնդումը դադարեցնելու կապակցությամբ առարկություն չունենք: Ցանկացած բանական մարդ կանդի, որ այդ իրավիճակում, երբ մարդկանց կյանքին սպառնացող վտանգները կանխելու հիմնական կամ միակ միջոցը Պրիգորժինի զինված ապստամբության գործով քրեական հետապնդումը դադարեցնելն էր, ապա այդ հետապնդումը պետք է անկասկած դադարեցվեր: Խնդիրն այն է, թե քրեական հետապնդումը դադարեցնելը իրավաբանական ին՞չ ձևակերպումներով պետք է ներկայացվեր: Անկեղծ և ազնիվ չեն այն իրավաբանները, ովքեր այս իրավճակը «փաթեթավորում են» որպես *intra legem* իրավակիրառում:

Ի տաբերություն հետմոդեռնի իրավաբանի, մետամոդեռնի իրավաբանը ոչ թե կխաղար անկեղծություն, այլ կլիներ անկեղծ և կնշեր, որ այս գործով ռուսական

¹³ Ղաւմբարյան Ա. «Հանրային իրավունքի զարգացումը օրենքին հակառակ (*contra legem*) «օրենքը չի պահանջում անհնարինը» իրավական մաքսիմի հիման վրա» // Բանբեր արդարադատության ակադեմիայի, 2023, № 1 (9), էջեր 47-67:

¹⁴ Ст. у Головко Л.В. «Вооруженный мятеж Е. Пригожина как зеркало российского неолиберализма» // Закон, 2023. № 7, էջ 75:

քրեական իրավունքը զարգացվել է ՌԴ քր. օր.-ին հակառակ¹⁵: Նա, հիմք ընդունելով *contra legem* իրավունքի զարգացման դոկտրինը, կվկայակոչեր մարդկանց անվտանգությունը (կյանքի իրավունքը) ապահովելու սկզբունքը, այնուհետև՝ քրեական հետապնդումը դադարեցնելու հիմքերի սպառնիչ ցանկի մասին օրենսդրական կարգավորումներին հակառակ, կսահմաներ քրեական հետապնդումը դադարեցնելու նոր հիմք, այն է՝ զինված ապստամբության գործերով քրեական հետապնդումը կարող է դադարեցվել, եթե առկա է անձանց կյանքը և հասարակական անվտանգությունն ապահովելու անհրաժեշտություն:

3. Տատանումները մոդեռնի օբյեկտիվ ճշմարտության և հետմոդեռնի ձևական ճշմարտության միջև

3.1. Օբյեկտիվ ճշմարտության նկատմամբ հետմոդեռնի հակահետմոդեռնիստական հարձակումները

ԽՍՀՄ փլուզումից հետո «հետմոդեռնի կարգախոսների ներքո, որը համընդհանուր ճշմարտության փոխարեն նախընտրում էր բացարձակ բազմակարծությունը (...), բացարձակ ճշմարտության ժխտման հետևանքով գիտելիքն ամենուր փոխարինվեց գիտելիքի սուռոգատներով (փոխնականերով)»¹⁶:

Հետմոդեռնի աշխարհընկալման պայմաններում, որտեղ գերակայում է բազմակարծությունը և ռելյատիվիզմը, այլևս դժվար է պնդել, որ դատավարական ապացուցումն ունի մեկ նպատակ, այն է՝ բացահայտել օբյեկտիվ ճշմարտությունը: Հետմոդեռնի բազմակարծությունը և ռելյատիվիզմը կասկածի տակ են դնում օբյեկտիվ ճշմարտության՝ որպես արդարադատության միակ նպատակի մասին տոտալիտար դատողությունները: Հետմոդեռնի քրեական դատավարությունում ապացուցման նպատակը դիտարկվում է բազմակարծության տեսանկյունից, օրինակ՝ ռուս դատավարագետներն ապացուցման նպատակի թեմայի շուրջ առայսօր իրականացնում են բուռն բանավեճեր, առանձնացնում են ապացուցման նպատակի տարբեր մոդելներ, օրինակ՝ ձևական ճշմարտությունը, ապացուցված ճշմարտությունը կամ կոնվենցիոնալ ճշմարտությունը:

Հետմոդեռնի հայեցակարգը թեև նշում է իմացության հարաբերական և ժամանակավոր լինելու մասին, սակայն դա չի նշանակում, որ, օրինակ, քրեական դատավարությունն, առհասարակ, պետք է մերժի ճշմարտության գաղափարը: Արդարադատության ոլորտում ճշմարտության բացահայտման նպատակի մերժումը արդարադատությունը կվերածեր աննպատակ կամ ինքնանպատակ գործընթացի: Օրինակ՝ Իտալիայում քրեական դատավարության դոկտրինը համաձայն չէ այն պնդման հետ ըստ որի՝ ճշմարտություն գոյություն չունի, հակառակ դեպքում դատական գործառույթը իմաստ չէր ունենա. դատավորը պատմական կոնկրետ պահի պարտավոր է որոշում կայացնել՝ հիմնվելով դատավարության ընթացքում ձեռք բերված տվյալների վրա, որոնք ապագայում կարող են նաև հերքվել, բայց որոշման արդարացիությունը կառուցվում է գիտելիքի հավաստիության վրա, որն առկա է եղել

¹⁵ Այս պարագայում *contra legem* իրավունքի զարգացման դոկտրինը ինքնաբավ կլիներ, եթե այդ որոշումը հաստատվեր նաև ՌԴ դատական համակարգի կողմից:

¹⁶ Տե՛ս **Дорошков В.В.** «Уголовное правосудие в условиях метамодерна и умеренного консерватизма: монография». М.: Изд. Прометей, 2023 էջ 16:

որոշում կայացնելու պահին¹⁷:

Արդարադատության նպատակի վերաբերյալ հետմոդեռնի բազմակարծությունը չի կարող տոտալ մերժել օբյեկտիվ ճշմարտությունը. դա հակասում է հենց հետմոդեռնի ռեյալիստիկային: Օբյեկտիվ ճշմարտության տոտալ մերժումը հակահետմոդեռնիստական մոտեցում է:

3.2. Օբյեկտիվ ճշմարտության վերադարձը դատական ճշմարտության «հագուստով»

Մետամոդեռնի ժամանակաշրջանում տեղի է ունենում արդարադատության նպատակի վերափոխում: Մետամոդեռնի տատանվող իրավաբանն այլևս համաձայն չէ օբյեկտիվ ճշմարտության տոտալ մերժման կամ օբյեկտիվ ճշմարտությանը հասանելու անհնարինության մասին դատողությունների հետ:

Մյուս կողմից՝ տատանվող իրավաբանին վախեցնում է օբյեկտիվ ճշմարտությունը՝ որպես գերակայություն հռչակելու միտքը, քանի որ նրա հիշողությունում դեռ թարմ է 1930-ականներին տարածված՝ ամեն գնով, այդ թվում՝ ինկվիզիցիոն մեթոդներով օբյեկտիվ ճշմարտությունը բացահայտելու պրակտիկան: Ավելին, XXI-րդ դարի սկզբին շատերին ցնցեց այն փաստը, երբ Եվրոպական դատարանում հաստատվեց, որ Հայաստանի դատավորներից մեկը 1999թ. արդարացրել էր վկաների նկատմամբ ոստիկանների կիրառած խոշտանգումները՝ վկայակոչելով ճշմարտությունը բացահայտելու նպատակը: Այդ դատավորը դատավճռում էքսպլիցիտ (ուղիղ) գրել էր.

«Դատարանը գնահատական տալով վկաներ Տ.-ի և Ա.-ի նախաքննության և դատաքննության ժամանակ տված հակասական ցուցմունքներին, գտնում է, որ իրականում ոստիկանության աշխատակիցների կողմից ռազմական ոստիկանության բաժնում բռնություն է գործադրվել ճշմարտությունը բացահայտելու համար»¹⁸:

Այժմ կարելի է վստահաբար ասել, որ մետամոդեռնը չի կարող տոտալ հերքել արդարադատության ոլորտում օբյեկտիվ ճշմարտությունը բացահայտելու (կամ այն իրավաբանորեն ձևակերպելու) հնարավորությունը:

Պատահական չէ, որ 30 տարի առաջ ռուս դատավարագետների կողմից մերժված օբյեկտիվ ճշմարտությունը դանդաղ քայլերով կրկին վերադառնում է ռուսական քրեադատավարական իրականություն, սակայն, քողարկված «դատական ճշմարտություն» անվամբ¹⁹: Ընդ որում, դատական ճշմարտության ռուսական հայեցակարգը չպետք է շփոթել ձևական ճշմարտության կամ դատարանում ապացուցված ճշմարտության հայեցակարգերի հետ հետ, ըստ որի՝ ճշմարտություն է այն պատմությունը, որը նկարագրել է դատարանը՝ իր դատավճռում:

Դատական ճշմարտության հայեցակարգում գերակայությունը տրվում է մոդեռնի օբյեկտիվ ճշմարտությանը, որը զուգակցվում է հետմոդեռնի ժամանակաշրջանին հայտնի գործիքային և ժամանակային սահմանափակումներով (զսպման կառուցակարգերով): Այլ կերպ ասած՝ դատական ճշմարտության հայեցակարգը ենթադրում է

¹⁷ Տե՛ս **Барабанов П.К.** «Уголовный процесс Италии». М.: Изд. «Спутник +», 2019, էջ 150-151:

¹⁸ Տե՛ս Եվրոպական դատարանի Հարությունյան ընդդեմ Հայաստանի գործով 2007թ. հունիսի 7-ի վճիռը:

¹⁹ Այս մասին տես **Пальчикова Н. В.** «К вопросу о характере истины в уголовно-процессуальном познании» // Общество и право. 2009. № 5, էջ 243-247, **Стедьмах В.Ю.** Судебная истина в уголовном судопроизводстве // Вестник Пермского университета. Юридические науки. 2016. №1 (31), էջ 112-12, **Соловьева Н. А., Шинкарук В. М.** «Интерпретации истины в уголовном процессе: компаративный анализ» // Logos et Praxis. 2016. № 3 (33), էջ 56-60. **Дорошков В.В.** «Уголовное правосудие в условиях метамодерна и умеренного консерватизма: монография». М.: Изд. Прометей, 2023, էջ 270-271:

օբյեկտիվ ճշմարտության բացահայտում, սակայն ոչ ամեն գնով ու ոչ ամեն եղանակով: Օբյեկտիվ ճշմարտությունը բացահայտելու նպատակով ապացույցներ ձեռք բերելու եղանակները կամ մեթոդները անսահմանափակ չեն, այն չի կառուցվում «նպատակը արդարացնում է միջոցները» մաքիավելիստական բանաձևի վրա, որը կանաչ լույս է տալիս խոշտանգումներին և դրա արդյունքում ձեռք բերված ապացույցների օգտագործմանը: Դատական ճշմարտության հայեցակարգի կողմնակիցների կարծիքով դատական (իսկ իրականում՝ օբյեկտիվ) ճշմարտությունը պետք է բացահայտել օրենքով սահմանված կարգով, իսկ այդ կարգը չի կարող հակասել իրավունքի սկզբունքներին: Ճշմարտությունը բացահայտելու նպատակը չի կարող պահանջել, որ դատավարությունը լինի անվերջ՝ դրանով իսկ վնասելով վարույթի ողջամիտ ժամկետի սկզբունքին:

Դատական ճշմարտության հայեցակարգի ռուսական տարբերակը դժվար է համարել ճոճվող տատանումների ընտրության արդյունք:

Նախ՝ դատական ճշմարտության հայեցակարգը ոչ թե տատանվում է մոդեռնի օբյեկտիվ ճշմարտության և հետմոդեռնի ձևական ճշմարտության միջև, այլ փորձում է օբյեկտիվ ճշմարտությունը զուգակցել որոշակի զսպող կառուցակարգերի հետ, մինչդեռ մետամոդեռնին հատուկ է ճոճանակաձև տատանումը օբյեկտիվ ճշմարտությունից դեպի ձևական ճշմարտությունը, և հակառակը:

Երկրորդ՝ «դատական ճշմարտություն» ձևակերպման գործածումն անկեղծ չէ, քանի որ այն արտահայտում է ոչ թե ճշմարտության նոր հայեցակարգ, այլ իրականում կոչված է քողարկելու հետխորհրդային իրավաբանին վախեցնող օբյեկտիվ ճշմարտությունը: Մինչդեռ, ինչպես նշվեց, մետամոդեռնն անկեղծության հարթակ է, որտեղ հարաբերվող կողմերը պետք է լինեն հնարավորինս ազնիվ: Սա նշանակում է, որ հարկ չկա օբյեկտիվ ճշմարտությունը թաքցնել «դատական ճշմարտություն» ձևակերպմամբ: Հատկապես ցանցային (թվային) հասարակությունում, որտեղ մարդիկ շատ հաճախ առցանց հետևում են հանցագործության կատարման ընթացքին, օբյեկտիվ ճշմարտությունը որևէ լեզվական ձևակերպումներով քողարկելը դառնում է իրականության հանդեպ հեգնանք: Ցանցային հասարակությունում վերանում են «օբյեկտիվ ճշմարտություն» ձևակերպումից խուսափելու կամ այն այլ ձևակերպումների միջոցով քողարկելու պատճառները:

3.3. Օբյեկտիվ ճշմարտությունը ցանցային հասարակությունում

Մետամոդեռնի ժամանակաշրջանում մոդեռնի օբյեկտիվ ճշմարտության և հետմոդեռնի ձևական ճշմարտության փաստարկներում անտեսվում են դեռևս 2010թ-ից ձևակերպում ստացած ավտոմոդեռնի (Ռոբերտ Սամուելս) կամ դիջիմոդեռնի (Ալան Կիրբի) հայեցակարգերը, որոնք կենտրոնանում են այն բանի վրա, թե ինչպես են նոր տեխնոլոգիաները (համացանց, համակարգիչ, սմարթֆոն, սոցիալական ցանցեր, տելեգրամ ալիքներ և այլն) վերափոխում սոցիալական հարաբերությունների կառուցվածքը: Այս առումով ներկայիս հասարակությունը թվային կամ ցանցային հասարակություն է:

Օբյեկտիվ ճշմարտության կողմնակիցները իրենց փաստարկներում դեռևս հաշվի չեն առնում հանցանքի կատարման ընթացքին ուղիղ հեռարձակմամբ առցանց (այսուհետ՝ առցանց) հետևելու (անմիջականորեն հայտնաբերելու) կամ հանցանքի կատարման ընթացքն ամրագրած տեսաձայնագրությունը հետագայում համացանցում

դիտելու եղանակով հանցավոր դեպքին անմիջականորեն հետևելու (այսուհետև՝ հետաոցանց) թվային հասարակության հնարավորությունը: Դատավարագետները դեռևս անում են արխաիկ պնդումներ.

«Քրեադատավարական ճանաչողության առարկա են (...) անցյալի կոնկրետ փաստերը, որոնք հնարավոր չէ վերարտադրել և անմիջականորեն ընկալել»²⁰:

Այս մոտեցման կողմնակիցները պարզապես նշում են, որ եթե հանցագործությունը կատարվել է ակներևության պայմաններում (հրապարակայնորեն), ապա որևէ բարդություն չի ներկայացնում ականատեսներին հարցաքննելու եղանակով ճշգրտորեն վերականգնել անցյալի պատկերը: «Այսպես ինքնաթիռն առևանգած ահաբեկիչների բոլոր գործողությունները պարզվում են հեշտությամբ և բացարձակ հուսալիորեն, գրեթե թույլ առ թույլ ճշգրտությամբ: Դրա համար բավական է հարցաքննել ուղևորներին ու անձնակազմի անդամներին, որոնց անունները նախապես հայտնի են»²¹:

Այս պնդման կողմնակիցներն անտեսում են այն իրողությունը, որ օրինակ՝ 22.03.2024թ.-ին «Կրոկուս Սիթի Հոլլում» տեղի ունեցած ահաբեկչության հանգամանքները թույլ առ թույլ ճշգրտությամբ պարզելու համար այլևս հացաքննությունը միակ կամ լավագույն միջոց չէ: Յանցային հասարակությունն ինքնին ականատես է եղել այդ դեպքի հիմնական հանգամանքներին, նա անմիջականորեն հայտնաբերել է դրանք, ուստի նա այլևս կարիք չունի, որ որևէ մեկը հարցաքննության միջոցով վերականգնի նախկինում տեղի ունեցած դեպքի պատկերը:

Հանցանքի կատարման ընթացքի տեսաձայնագրությունն օբյեկտիվ իրականության (հանցանքի կատարման ընթացքի) արտացոլված կրկնօրինակումն է (հայելային արտացոլանքն է), որը, ի տարբերություն արտացոլված օբյեկտի, կարող է բազմակի անգամ վերարտադրվել: Դատավարագետները իրավացիորեն նշում են.

«Ձայնագրությունների և տեսագրությունների վերարտադրության ժամանակ ստեղծում է այսպես կոչված «ներկայության տպավորություն», որը թույլ է տալիս յուրովի դառնալ դրանցում ֆիքսված իրադարձությունների «ականատես», քանի որ դրանց հետազոտման ընթացքում դատարանը և գործին մասնակցող անձինք հնարավորություն են ստանում գործի հանգամանքներն ընկալել գրեթե այն ծավալով, որով կընկալեին այդ

իրադարձությունների անմիջական ականատեսը լինելու դեպքում»²²:

Ավտոմոդեռնի (մետամոդեռնի) արդարադատությունը հաճախ փորձում է ոչ թե ապացույցների միջոցով հետադարձ հայացքով (ռետրոսպեկտիվ) վերակառուցել իրականությունը և բացահայտել օբյեկտիվ ճշմարտությունը, այլ դատարանը պարզապես իրավաբանորեն արձանագրում է ցանցային հասարակության աչքի առաջ տեղի ունեցած դեպքը և դրան տալիս է իրավաբանական որակում: Ընդ որում, ժամանակակից դատավորը ևս ցանցային հասարակության մասն է:

Հանցանքի կատարման ընթացքին առցանց կամ հետաոցանց հետևելու (դեպքն

²⁰ Տե՛ս **Орлов Ю. К.** «Современные проблемы доказывания и использования специальных знаний в уголовном судопроизводстве: научно-учебное пособие». М.: Изд. Проспект, 2016, էջ 20:

²¹ Տե՛ս **Орлов Ю. К.** Указ. Соч, էջ 21:

²² Տե՛ս **Боннер А.Т.** «Аудио- и видеозаписи как доказательство в гражданском и арбитражном процессе» // Законодательство, 2008. № 3, էջ 83-84, **Մեղրյան Մ.** «Ապացուցումը և ապացույցները Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարությունում»: Եր.: Արդարադատության ակադեմիա, 2020, էջ 254:

անմիջականորեն հայտնաբերելու) պայմաններում որևէ պաշտոնատար անձ կամ դատավարական փաստաթուղթ ի զորու չէ կասկածի տակ դնել այն օբյեկտիվ ճշմարտությունը, որը թվային հասարակության համար մակրոմակարդակում բացահայտված է: Օրինակ՝ որևէ քննիչ կամ դատավոր չի կարող հայ հասարակությանը համոզել, որ 2018թ. հեղափոխության ժամանակ ռադիոտուն ներխուժելը հակաիրավական (արգելված) արարք չէ կամ հանցակազմի հատկանիշներ չի պարունակում. ցանցային հասարակության համար օբյեկտիվ ճշմարտությունը բացահայտված է եղել այն պահից, երբ նա առցանց ականատես է եղել ռադիոտուն բռնությամբ ներխուժելու ընթացքին, ուստի հանցակազմի բացակայության հիմքով քրեական վարույթը կարճելու մասին դատավարական որոշումը հետմոդեռնիստական ոճի հեգնանք է իրականության հանդեպ: Այս պարագայում քրեական վարույթը պետք է կարճվեր ոչ թե հանցակազմի բացակայության ռեաբիլիտացիոն հիմքով, այլ ոչ ռեաբիլիտացիոն հիմքով:

Միևնույն ժամանակ, այս ամենում նկատվում է պարադոքս, քանի որ ցանցային հասարակության կողմից հանցանքի կատարման առցանց կամ հետառցանց հետևելու և օբյեկտիվ ճշմարտությունը բացահայտելու (անմիջականորեն հայտնաբերելու) մասին դատողությունը ոչ թե հիմնավորում է դատարանի կողմից օբյեկտիվ ճշմարտությունը բացահայտելու հնարավորությունը, այլ իրականում հերքում է դա. չէ որ վերը նշվածով ստացվում է, որ ցանցային հասարակության համար մակրոմակարդակում օբյեկտիվ ճշմարտությունը արդեն իսկ բացահայտված է, իսկ դատարանը չի կարող բացահայտել մի բան, որն արդեն իսկ բացահայտված է: Այս իրավիճակում դատարանը միկրոմակարդակում պարզապես հստակեցնում է դեպքի մանրամասները, այնուհետև՝ դրանք իրավաբանորեն ձևակերպում:

Նկարագրված իրավիճակում ցանցային հասարակությունը, կարծես, զբաղեցնում է դատարանի տեղը. հանցավոր արարքի կատարման ընթացքին առցանց կամ հետառցանց ականատես ցանցային հասարակությունը օբյեկտիվ ճշմարտության բացահայտման հարցով փաստացի վերաժվում է դատարանի սուբստիտուտի²³ (այս պարադոքսն առնչվում է ցանցային հասարակությունում ժամանակի և տարածության փոփոխության վերաբերյալ փիլիսոփայական բարդ հարցերին, որոնք պետք է թողնել ապագայի քննարկմանը):

Մետամոդեռնի արդարադատությունը տատանվում է օբյեկտիվ և ձևական ճշմարտությունների միջև, ուստի ճոճանակաձև այս տատանման ընտրությունը կարող է կանգնել ոչ միայն օբյեկտիվ, այլ նաև ձևական ճշմարտության վրա, օրինակ՝ հանցագործության դեպքի տեսաձայնագրման բացակայության պայմաններում, եթե մեղադրյալն ընդունել է մեղքը, որի արդյունքում իրականացվում է պարզեցված վարույթ, ապա այս պարագայում գործ ունենք ձևական ճշմարտության հետ: Այս դեպքում ճշմարիտ պետք է համարել այն պատմությունը, որը նկարագրել է դատավորը իր դատավճռում:

Այնուամենայնիվ, մետամոդեռնի արդարադատությունում, որտեղ ցանցային հասարակությունն առավել հաճախ է հնարավորություն ունենանում առցանց կամ հետառցանց հետևելու հանցանքի կատարման ընթացքին, ճոճանակաձև տատանումն առավել հաճախ է ընտրելու մոդեռնի օբյեկտիվ ճշմարտությունը:

²³ Լատիներեն substitutio - փոխարինում:

Իսկ ինչ անել, եթե ցանցային հասարակությունն առցանց կամ հետառցանց հետևել է հանցանքի կատարմանը, սակայն հանցագործության կատարման ընթացքի տեսաձայնագրությունը (կրիչը), որպես ապացույց, վարույթն իրականացնող մարմինը ձեռք է բերել օրենքով սահմանված կարգի էական խախտմամբ: Այս պարագայում ապացույցների թույլատրելիության ինստիտուտն արդյո՞ք կենսունակ է, արդյո՞ք նա կարող է շարունակելու կատարելու իր ավանդական գործառույթը:

4. Տատանումներն ապացույցի թույլատրելիության որոշելիս և ցանցային ակտիվիզմի ազդեցությունը

4.1. Ապացույցի թույլատրելիությունը մոդեռնի և հետմոդեռնի ժամանակաշրջանում

Ապացույցի թույլատրելիությունը ոչ բոլոր ժամանակներում է անվերապահորեն ճանաչվել որպես ապացույցի ինքնուրույն հատկանիշ, այն առավելապես հետմոդեռնի արդարադատության ինստիտուտ է: Մոդեռնի ժամանակաշրջանում ապացույցի թույլատրելիությունը որոշվել է վերաբերելիությամբ: Այսպես՝ Ա. Վիշինսկին նշում էր, որ որպես ապացույց թույլատրելի են գործի համար նշանակություն ունեցող բոլոր հանգամանքները²⁴: Նման մոտեցմամբ, ըստ էության, մերժվում էր ապացույցի թույլատրելիության հատկանիշը, քանի որ, անկախ ապացույցի ձեռքբերման եղանակի օրինականությունից, այն թույլատրելի էր, եթե վերաբերելի էր: Մոդեռնի ժամանակաշրջանի ապացույցի թույլատրելիությունն ըստ էության ապացույցի վերաբերելիությունն էր:

Այն, որ ապացույցի թույլատրելիության կանոնն առավելապես հետմոդեռնի արդարադատության հատկանիշ է, ապացուցվում է նաև տարբեր երկրների պրակտիկայում (օրինակ՝ ԱՄՆ-ի, Կանադայի, Իռլանդիայի քրեական դատավարությունում ապացույցի թույլատրելիությունը ճանաչվում է որպես ապացույցի հատկանիշ, սակայն դա ոչ բոլոր ժամանակներում է այդպես եղել)²⁵: Անգլիական իրավունքում առաջօր ապացույցը թույլատրելի ճանաչելու հիմնական չափանիշը ոչ թե այն ձեռք բերելիս օրենքի խիստ պահպանումն է, այլ նրա անմիջական ունակությունն է՝ ապացուցելու դատարանում հաստատման ենթակա հանգամանքները²⁶: Հետխորհրդային պետություններում ապացույցի թույլատրելիության ինստիտուտը դոկտրինալ լայն ճանաչում և գործնական նշանակություն ստացավ 1990 ականներից հետո:

Մետամոդեռնի իրավաբանը կրկին տատանվում է մոդեռնի ապացույցի վերաբերելիության-թույլատրելիության և հետմոդեռնի ապացույցի թույլատրելիության միջև: Թեև քրեական արդարադատության արժեհամակարգում ապացույցի թույլատրելիության ինստիտուտին մշտապես հատկացրել ենք պատվավոր տեղ, սակայն այսօր տատանվում են այն հարցում, թե արդյոք կարել է հանցագործության կտարման տեսաձայնագրությունը, որով հասարակությունն առցանց կամ հետառցանց հետևել է հանցանքի կատարմանը, ճանաչել անթույլատրելի, եթե այն ձեռք է բերվել

²⁴ Տե՛ս **Вышинский А.Я.** «Теория судебных доказательств в советском праве». М.: 1941, էջ 153:

²⁵ Այս մասին տե՛ս **Барбанов П.К.** «Уголовный процесс в США». М.: Изд. «Спутник +», 2023, էջ 295, Недопустимость доказательств в уголовном процессе Российской Федерации и государств англо-американской и романо-германской правовых семей: учебное пособие. Под науч. ред. А.Г. Волеводза. М.: Изд. Прометей, 2022, էջ 69:

²⁶ Տե՛ս **Головко Л.В., Гуценко К.Ф., Филимонов Б.А.** «Уголовный процесс зарубежных стран: учебное пособие. 2-е изд., доп. и испр.», М.: Зерцало-М, 2002, էջ 86:

մարդու հիմնական իրավունքների խախտմամբ:

4.2. Ցանցային ակտիվիզմը և դատավորի ինտերպասիվությունը

Ինչպես նշվեց, ցանցային հասարակությունն առցանց կամ հետառցանց կարող է անմիջականորեն հետևել հանցանքի կատարմանը, որի արդյունքում այդ հասարակությունը համացանցում կազմակերպում է ակտիվ քննարկումներ (ցանցային ակտիվիզմ)²⁷: Նման քննարկումներ տեղի են ունենում հատկապես մարդու դեմ ուղղված հանցագործությունների պարագայում, որտեղ ուժգին է նաև էմոցիանալ գործոնը: Օրինակ՝ հայ հասարակությանը ցնցել էր այն դեպքը, երբ նա հետառցանց, այսինքն՝ համացանցում հայտնված տեսաձայնագրությունը դիտելու միջոցով, անմիջականորեն ականատես եղավ, թե ինչպես է մայրը իր անչափահաս դստեր նկատմամբ կատարում տարաբնույթ անպարկեշտ (սեռական բնույթի) գործողություններ: Ընդ որում, մայրը անչափահասի նկատմամբ կատարած իր գործողությունները տեսաձայնագրել էր՝ այն հետագայում վաճառելու և շահույթ ստանալու նպատակով: Ցանցային հասարակությունը, համացանցում հայտնված տեսաձայնագրությունը դիտելու արդյունքում, նախաձեռնել էր ակտիվ քննարկումներ:

Դժվար է կլինի անկեղծության հարթակում հերքել այն, որ ցանցային ակտիվիզմն ահռելի ազդեցություն ունի դատավորի վարքագծի վրա: Ապացուցման կարիք չունի նաև այն, որ դատավորի վարքի վրա մետամոդեռնի ցանցային ակտիվիզմի ներգործության ինտենսիվությունը էապես գերազանցում է հետմոդեռնի թղթային ԶԼՄ-ի ազդեցությանը:

Դատավորի և փաստաբանի վարքագծի նման խորքային փոփոխությունների պատճառը, ամենայն հավանականությամբ, իրենց անձի նկատմամբ դրսևորված ցանցային ակտիվիզմն է: Եթե այդ ակտիվիզմը կարող է ազդել դատավորի՝ այս տեսակի վարքագծի վրա, ապա հարց է ծագում, թե դատավորն արդյոք ունակ է հանցանքի ընթացքն ամրագրած տեսաձայնագրության վերաբերյալ իրավական որոշումներ կայացնելիս, օրինակ՝ տեսաձայնագրության թույլատրելիության հարցը քննարկելիս, հակադրվել տեսաձայնագրության մեջ արտացոլված իրականությանը և դրա շուրջ ընթացող ցանցային ակտիվիզմին:

Սույն հարցի պատասխանը քննարկենք մոր կողմից դստեր նկատմամբ անպարկեշտ գործողություններ կատարելու վերը նշված դեպքով: Ենթադրենք, որ մոր կատարած տեսաձայնագրությունը ձեռք է բերվել բնակարանի անձեռնմխելիության իրավունքի խախտմամբ, և այն հանդիսանում է մեղադրանքի միակ ապացույցը, այսինքն՝ եթե այդ տեսաձայնագրությունը ճանաչվի անթույլատրելի, ապա դատարանը պետք է կայացնի արդարացման դատավճիռ: Այս տեսաձայնագրությունն արդյո՞ք կճանաչվի անթույլատրելի և արդյո՞ք կկայացվի արդարացման դատավճիռ:

Այդ տեսաձայնագրության՝ որպես ապացույցի թույլատրելիության որոշման հարցում մեր տատանումը պայմանավորված է երկու հանգամանքով: Մի կողմից՝ իրավաբանների համար անվիճելի է, որ բնակարանի անձեռնմխելիության իրավունքի աղաղակող խախտմամբ ձեռք բերված տվյալները պետք է ճանաչվեն անթույլատրելի: Մյուս կողմից՝ հանգիստ չի թողնում այն հարցը, թե մետամոդեռնի արդարադատության և ցանցային հասարակության պայմաններում նույնիսկ

²⁷ Ցանցային ակտիվիզմն ունակ է նաև աղճատել իրականությունը: Հասկանալի է, որ օբյեկտիվ ճշմարտությունը հաստատվում է ոչ թե ցանցային ակտիվիզմով, այլ հանցանքի ընթացքի տեսաձայնագրությամբ, եթե հիմքեր չկա կասկածելու, որ այդ տեսաձայնագրությունը արհեստական բանականության կողմից կեղծված է:

բնակարանի անձեռնմխելիության իրավունքի խախտմամբ ձեռք բերված տեսաձայնագրությունն անթույլատրելի ճանաչելու մասին դատական մոտեցումն արդյո՞ք կարող է համարվել որպես անվերապահ կանոն:

Տևական մտորումների և էմպիրիկ ուսումնասիրության արդյունքում այլևս չենք կարող միանշանակել պնդել, որ նույնիսկ բնակարանի անձեռնմխելիության իրավունքի խախտմամբ ձեռք բերված տեսաձայնագրությունը ցանցային հասարակությունում և մետամոդեռնի արդարադատությունում անվերապահորեն պետք է չունենա որևէ դատավարական նշանակություն:

Եթե ցանցային հասարակությունը հետառցանց (համացանցում հայտնված այդ տեսաձայնագրությունը դիտելով) հետևել է երեխայի նկատմամբ մոր կատարած անպարկեշտ գործողություններին (անմիջականորեն հայտնաբերել է դրանք), ապա դա նշանակում է, որ այդ հասարակության համար օբյեկտիվ ճշմարտությունը մակրոմակարդակում արդեն իսկ բացահայտված է, ուստի ցանցային հասարակությունը տեսաձայնագրված փաստերի մասով փաստացի փոխարինում է դատավորին՝ վերաձվելով դատարանի սուբստիտուտի, իսկ դատավորն օբյեկտիվորեն հայտնվում է «ինտերպասիվության (Interpassivity) վիճակում»²⁸: Սա նշանակում է, որ, քննարկվող

իրավիճակում, դատական ակտը թեև կայացնում է դատավորը, սակայն այդ ժամանակ մեխանիկորեն աշխատում է միայն դատավորի ձեռքը, իսկ տեսաձայնագրությամբ ամրագրված փաստական տվյալների մասով նրա համոզմունքը կանխորոշված է հանցանքի կատարմանն առցանց կամ հետառցանց ակատանես ցանցային հասարակության կողմից:

Իրավաբանի համար այս դատողությունը կթվա տարօրինակ, սակայն այս հարցում պետք է գերակայի մետամոդեռնի անկեղծությունը: Եթե ցանցային ակտիվիզմը կարող է ստիպել դատավորին նույնիսկ վիրահատական միջոցներով արմատապես վերափոխել իր արտաքինը, ապա քիչ հավանական է, որ այդ նույն դատավորն ունակ է կայացնելու մի որոշում, որը հակադրվում է տեսաձայնագրությամբ ամրագրված իրականությանը և դրան ակատանես ցանցային հասարակության դիրքորոշմանը: Այլ կերպ ասած՝ քիչ հավանական է, որ դատավորը կարող է անթույլատրելի ճանաչել մեղադրանքի միակ ապացույցը և կարող է կայացնել արդարացման դատավճիռ:

Հայաստանի տարբեր ԲՈՒՀ-երի իրավաբանական ֆակուլտետների 2-րդ կուրսից բարձր ուսանողների շրջանակներում անցկացվել է հարցում՝ հետևյալ բովանդակությամբ. բնակարանի անձեռնմխելիության իրավունքի խախտմամբ ձեռք բերված տեսաձայնագրությունը, որը մեղադրանքի միակ ապացույցն է, արդյո՞ք կհամարեք թույլատրելի ապացույց: Հարցմանը մասնակցել է 125 ուսանող, որոնցից 73.6 % (92 ուսանող) պատասխանել է, որ այո, այդ տեսաձայնագրությունը կահամարի թույլատրելի ապացույց, իսկ 26.4 % (33 ուսանող) պատասխանել է, որ այն չի համարի թույլատրելի: Հարցման են ենթարկվել ուսանողները, քանի որ՝ 1) նրանք նոր ժամանակների ցանցային հասարակության ակտիվ մասնակիցներ են, 2) տիրապետում են սահմանադրական և քրեադատավարական իրավունքի ճյուղերին, 3) նրանց մտածողության մեջ դեռևս չի գերակայում ֆորմալացված մտածողությունը:

²⁸ Sté' u **Мазоренко Д. А.** «Автомодернизм после постмодерна. Как выглядит «Социальное» в цифровую эпоху?» // Galac- tica Media: Journal of Media Studies . 2019. №2, էջ 209, **Samuels R.** «Auto modernity after post-modernism: Autonomy and Automation. In Culture, Technology, and Education. Digital Youth, Innovation, and the Unexpected». M: The MIT Press.2007.

Այսպիսով՝ հանցանքի կատարման ընթացքի տեսաձայնագրությունը, եթե նույնիսկ ձեռք է բերվել օրենքի էական խախտմամբ, ցանցային հասարակությունում այն պետք է պահպանի իր դատավարական նշանակությունը, սակայն պետք է փնտրել այն իրավական ձևը, որի շրջանակներում մի կողմից՝ դատական կարգով կվերահաստատվի ցանցային հասարակության կողմից անմիջականորեն բացահայտված օբյեկտիվ ճշմարտությունը, մյուս կողմից՝ ապացույցի թույլատրելիության ինստիտուտին էական վնաս չի պատճառվի:

4.3. Օրենքի էական խախտմամբ ձեռք բերված տեսաձայնագրության դատավարական նշանակությունը

Ցանցային հասարակությունում հանցանքի կատարման ընթացքն ամրագրող տեսաձայնագրությունը, որը ձեռք է բերվել օրենքի էական խախտմամբ, կարող է պահպանել դատավարական արժեքը հետևյալ ճանապարհներից որևէ մեկով:

Տարբերակ առաջին. առանց դատարանի որոշմամբ բնակարանի խուզարկության արդյունքում ձեռք բերված տեսաձայնագրությունը ճանաչվում է անթույլատրելի, սակայն քննիչը դրանից հետո այլ քննչական գործողությունների միջոցով ձեռք է բերում համացանցում ներբեռնված նույն տեսաձայնագրությունը և դա է ճանաչում որպես իրեղեն ապացույց:

Այս տարբերակը թեև գործնական առումով պարզ է, նույնիսկ արդյունավետ է, սակայն այդ տարբերակի դեմ կարելի է բերել երկու փաստարկ, որոնք հարցի լուծման այս տարբերակի կենսունակությունը զրոյացնում են: 1) Այս տարբերակն ըստ էության ապացույցի թույլատրելիության ինստիտուտը քողարկված ձևով շրջանցելու մասին է, ինչն էապես արժեզրկում է թույլատրելիության ինստիտուտը: 2) Հանցանքի ընթացքի տեսաձայնագրությունը իրեղեն ապացույց է, իսկ իրեղեն ապացույցներն անփոխարինելի են: Եթե տեսաձայնագրությունը, որպես իրեղեն ապացույց, անթույլատրելի է, ապա այն չի կարող փոխարինվել տեսաձայնագրության պատճեններով:

Տարբերակ երկրորդ՝ մակրոմակարդում հանցագործության դեպքի տեսաձայնագրությունը (կրիչը) դուրս է բերվում ապացույցների թույլատրելիության ինստիտուտի գործողության տիրույթից և նույնիսկ առանց դատարանի որոշմամբ բնակարանի խուզարկության միջոցով ձեռք բերված ապացույցը ճանաչվում է օգտագործման համար պիտանի: Այս մոտեցումը վտանգավոր է, քանի որ պարարտ հող է ստեղծում մոդեռնի արդարադատությանը ներհատուկ «թույլատրելի է այն ապացույցը, որը վերաբերելի է» կոնցեպտը վերակենդանացնելու համար:

Այս տարբերակը սկզբունքորեն անընդունելի է, քանի որ այն հակասում է քրեադատավարական արժեհամակարգում պատվավոր տեղ զբաղեցնող ապացույցի թույլատրելիության ինստիտուտի էությանը: Ապացույցի թույլատրելիության հատկանիշը կորցնում է իր ինքնավարությունը և այն որոշվում է ապացույցի վերաբերելիությամբ:

Տարբերակ երրորդ՝ տեսաձայնագրված հանցանքի դեպքը, որը դարձել է ցանցային ակտիվության առարկա, ճանաչվում է որպես հանրահայտ (կամ ակնհայտ) փաստ և դուրս է բերվում ապացուցման առարկայից: Այս պարագայում տեսաձայնագրված հանցանքի փաստն համարվում է ապացուցված, այն այլևս ապացուցման կարիք չունի: Այս պարագայում տեսաձայնագրության կրիչը հանրահայտ փաստի մասով չի ճանաչվում որպես իրեղեն ապացույց, ուստի նրա նկատմամբ ապացույցի թույլատրելիության կանոնները կիրառելի չեն:

Ի դեպ, Շվեյցարիայի քր. դատ. օր.-ի 139-րդ հոդվածի իմաստով ապացուցումը չի իրականացվում այն փաստերի վերաբերյալ, որոնք ակնհայտ են, կամ քրեական վարույթի մարմիններին հայտնի են: Հետևապես դրանք դուրս են բերվում ապացուցման առարկայից²⁹:

²⁹ См. у **Трефилов А. А.** «Уголовный процесс зарубежных стран. Том 1 (15)». М.: Изд. НИПКЦ Восход-А. 2016, էջ 290:

Ռուսական քրեական դատավարության տեսության մեջ, բացի հանրահայտ փաստերից, առանձնացվում են նաև ակնհայտ փաստերը, որոնք ևս ապացուցման կարիք չունեն³⁰:

Ակնհայտ փաստերը վարույթն իրականացնող մարմինը հայտնաբերում է անմիջականորեն՝ այս կամ այն հանգամանքը անմիջականորեն դիտարկելիս: Օրինակ՝ Կ. Կալինովսկին դատական նիստի ժամանակ դատավորի կողմից մեղադրյալի հակաիրավական վարքագծի անմիջական դիտարումը համարում է ապացուցման ինքնուրույն միջոց՝ այն անվանելով «անմիջականորեն հայտնաբերում», իսկ անմիջականորեն հայտնաբերված փաստը որակել է որպես հանրահայտ փաստի

տարատեսակ³¹: Այս իրավիճակում դատավորը, մեղադրյալին նիստերի դահլիճից հեռացնելու մասին որոշում կայացնելիս մեղադրյալի հակաիրավական վարքագծի վերաբերյալ ապացույցներ չի հավաքում (ապացուցում չի իրականացնում), այլ օգտագործում է մեղադրյալի հակաիրավական վարքագծի հանրահայտ փաստը:

Նույն տրամաբանությամբ, ցանցային հասարակությունը և դատավորը, որպես այդ հասարակության մաս, առցանց կամ հետ առացանց հետևելով հանցանքի կատարման ընթացքին անմիջականորեն հայտնաբերում է հանցավոր վարքագիծը, որը կարող է որակվել որպես հանրահայտ (ակնհայտ) փաստ: Բոլոր դեպքերում, «անմիջականորեն հայտնաբերումը» որպես ապացուցման միջոց ճանաչելու, և դրա արդյունքները՝ որպես հանրահայտ փաստ ճանաչելու հարցերը պետք է դառնան գիտության քննարկման առարկան: Հատկապես պետք է պարզել այս իրավիճակում դատավարության սկզբունքների, մասնավորապես՝ անմեղության կանխավարկածի սկզբունքի «գործունակության» հարցը:

Եթե տեսաձայնագրության մեջ արտացոլված հանցավոր վարքագիծը ճանաչում ենք որպես հանրային փաստ, ապա այդ տեսաձայնագրությունը թեև դատարանում չի օգտագործվում որպես ապացույց, սակայն կարող է օգտագործվել այլ դատավարական նպատակներով, օրինակ, այն կարող է օգտագործվել հարցաքննությունների ժամանակ, երբ անհրաժեշտ է այն ցուցադրելով հստակեցնելու կամ վիճարկելու դատարանում տրված ցուցմունքները կամ կարող է օգտագործվել փորձաքննության կատարման ժամանակ՝ որպես նյութ: Ցանցային ակտիվության առարկան կազմող դեպքը հանրահայտ փաստ ճանաչելու դեպքում հանցանքի կատարման ընթացքի տեսաձայնագրությունը չի համարվելու մակրոմակարդակում դեպքը հիմնավորող մեղադրական ապացույց:

Այսպիսով՝ մետամոդեռնի արդարադատության ժամանակ, տեսաձայնագրված հանցանքի դեպքը, որ դարձել է ցանցային ակտիվիզմի առարկա, պետք է համարել է ապացուցման կարիք չունեցող հանրահայտ փաստ:

Եզրակացություններ

Մետամոդեռնը միավորում է մոդեռնի և հետմոդեռնի արդարադատության գերակայությունները, սակայն դա դասական իմաստով միավորում չէ, այլ գերակայությունների միջև ճոճանակաձև տատանումներ է: Մետամոդեռնի ժամանակ մոդեռնի և հետմոդեռնի արժեքների միջև տատանումները և աշխարհընկալման փոփոխությունները չեն կարող չազդել հասարակական-քաղաքական համակարգում կարևոր տեղ զբաղեցնող արդարադատության վերաիմաստավորման վրա:

³⁰ Տե՛ս **Селина Е.В.** «Доказывание с использованием специальных познаний по уголовным делам». М.: Изд. Юрлитинформ, 2003, էջ 44-45:

³¹ Տե՛ս **Калиновский К. Б.** «Бремя доказывания в уголовном процессе: динамический или статический подходы» // Юридическая истина в уголовном праве и процессе: сборник статей по материалам Всероссийской научно-практической конференции 16-17 марта 2018 г. СПб., 2018, էջ 98:

ПРАВОСУДИЕ МЕТАМОДЕРНА: КОЛЕБАНИЯ МЕЖДУ ПРИОРИТЕТАМИ МОДЕРНА И ПОСТМОДЕРНА

ГАМБАРЯН АРТУР

Заведующий кафедры теории права и конституционного права

Российско-Армянского университета,

*профессор Академии государственного управления Республики Армения, доктор
юридических наук, профессор, заслуженный юрист РА*

Аннотация. В статье автор представляет колебания приоритетов между модерном и постмодерном, в рамках которого выявляет общую характеристику модерна, постмодерна и метамодерна, затем, основываясь на нижеприведенных трех вопросах, анализирует присущие метамодерну маятникообразные колебания.

Автор отмечает, что при принятии решений юрист метамодерна то колеблется в сторону модерна, пытаясь быть честным, то возвращается к постмодерну, вновь выбирая иронию и цинизм (1), или склоняется в сторону модерна, выбирая объективную истину, после чего возвращается к постмодерну и толкует о формальной истине (2), либо же колеблется в сторону модернистского понимания допустимости доказательств, затем возвращается к постмодерну и толкует о допустимости доказательств, приобретенных нарушением прав человека (3).

Автор считает, что в условиях цифровизации современного общества, последнее, посредством цифровых технологий волей-неволей становится свидетелем факта совершения преступления, в результате которого трансформируется и понимание принципа допустимости доказательств судом, допуская отклонения и исключения от него.

Автором использованы различные научно-исследовательские методы, а, в частности, метод социологического исследования, в лице представленного в статье опроса.

Ключевые слова: модерн, постмодерн, метамодерн, *contra legem*, цифровое общество, истина, колеблющийся юрист.

METAMODERN JUSTICE: OSCILLATING BETWEEN MODERN AND POSTMODERN PRIORITIES

GHAMBARYAN ARTUR

Chairman of the Department of Theory of Law and Constitutional Law of Russian Armenian University, Full Professor of the State Administration Academy of the Republic of Armenia, Doctor of Law, Full Professor, Honored lawyer of the RA

Annotation. *In the article the author intends to present the oscillation of priorities between modernity and postmodernity, for the purpose of which he identifies the general characteristic of modernity, postmodernity and metamodernity, then, based on the three questions below, analyses the inherent qualitative oscillations of metamodernity.*

The author observes that the metamodern lawyer, when making decisions, either swings towards modernity and tries to be honest, then returns to postmodernity, again choosing irony and cynicism (1), or swings towards modernity and chooses objective truth, then returns to postmodernity and talks about formal truth (2), or swings towards a modernist understanding of the admissibility of evidence, then returns to postmodernity and talks about the admissibility of evidence acquired by human rights violations (3).

The author believes that in the conditions of digitalisation of modern society, when society, through digital technologies willy-nilly witnesses the fact of committing a crime, as a result of which the understanding of the principle of admissibility of evidence by the court is also transformed, allowing deviations and exceptions from it.

The author has used various research methods and, in particular, the method of sociological research, represented by the survey presented in the article.

Keywords. *modernity, postmodernity, metamodernity, contra legem, digital society, truth, oscillating lawyer.*

*Հոդվածը գրախոսվել է՝ 06.12.2024թ.
Ներկայացվել է պաշտոնաթղթի միջոցով՝ 03.01.2025թ.*